

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՆԴՐԻ
ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿՈՆՏԵՔՏԸ

Ողջայա Հարությունյան

Բանալի բառեր՝ անվտանգություն, հոգեկան առողջություն, արժեքներ, կյանքի իմաստ, մորթիլիզմագիա

Անվտանգություն հասկացությունը վերջին տարիներին ծերք է բերել ոչ միայն հանրային, այլև համաշխարհային նշանակություն։ Անվտանգությունը՝ բարդ, բազմաբովանդակ, բազմակառուց կենսասպահովական համակարգ է, որն ամեն առումով փոխկապակցված է կյանքի կարևոր ասպեկտների հետ։ Հոգեբանական անվտանգությունը մեծապես հիմնվում է անձի սուբյեկտիվ աշխարհնկալման, հուզագացմունքային ոլորտի կայունության, անձնային փորձի, հոգեկանի գործունեության առանձնահատկությունների, բնավորության և խառնվածքի վրա։ Անվտանգության զգացողության ընկալման գործընթացը ավելի շատ կապված է սուբյեկտիվ պատկերացումների հետ, քան օրենքություն։ Իրականում մենք ենք հուզագացմունքային գերծանրաբեռնվածութուն ստեղծում և հայտնվում վտանգի զգացման տիհած վիճակում։ Հայտ կարևոր է անվտանգության՝ որուն բազային պահանջնունքի և դրա բավարարման մասին ամրողական պատկերացում ունենալը։

Անվտանգությունը չի կարելի դիտել որպես սուկ ներ գիտական կատեգորիա կամ ներ մասնագիտական խնդիր։ Հիրավի, այն այսօր պեսք է դարնա հանրային գաղափարական ստրատեգիա։ Մի շարք զարգացած պետություններում դիտարկվում և կարևորվում են «անվտանգություն» հասկացության մի քանի կատեգորիաներ, որոնցից են՝ տեղեկատվական, ազգային, սոցիալական և հոգեբանական անվտանգության տեսակները։

Հոգեբանական անվտանգության հարցի կարևորությունն ու հրատապությունը սկսվեց գիտակցվել միայն վերջին տասնամյակներում։ Անձի և ընդհանրապես հասարակության մեջ հոգեբանական անվտանգության զգացումն ապահովող և լարվածությունը թուլացնող լավագոյն տարբերակներից մեկն ադապտացիան է։ Ադապտացվել նշանակում է հարմարվել, իսկ հարմարված անձը ունենում է տագնապայմության ցածր և սթեսակայունության բարձր մակարդակներ։ Ադապտացումը ժամանակակից կյանքի թելադրած պայմաններին, առօրյա կենցաղյին խնդիրներին, մասնագիտական դժվարություններին, աշխատանքային ռեժիմին և կենսական նշանակության մի շարք այլ ոլորտներին համապայլ ընթանալն է՝ հասարակության ներկայացրած պահանջների բավարարմամբ և չափանմուշային համարվող խնճերի սպասումների արդարացմամբ։ Եթե անձի սոցիալական պատասխանատվությունը բարձր մակարդակի է, և նա ունի զարգացած գերես «սուպեր էգո», անձնապես հասունացած է և ադապտացված, իսկ ադապտացված մարդ հոգեպես ավելի կայուն է ու անկուտրուն և հոգենական առումով ավելի անխոցելի է։

Հոգեբանական անվտանգությունը հոգեկանի ապահովությունն է, անձնային ամրողականության զգացման, հոգեկան առողջության և հոգնոր կառույցի պաշտպանության ապահովմամբ [1]։

* Հոդվածն ընդունվել է 26.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը։

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Դիտարկելով հոգեբանական անվտանգություն հայեցակարգը Ս. Կ. Ողջինը և Վ. Ա. Սոսնինը վերլուծեցին անվտանգության հայեցակարգի բովանդակության սահմանումը տարբեր երկրների բացատրական բառարանների հիման վրա: Ուստեղն, անզերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուների ակադեմիական բառարաններն ուսումնասիրելու գործընթացում պարզվել է, որ ազգային գիտակցության մեջ «անվտանգություն» հասկացությունը կապված է ոչ այնքան սպառնալիքի բացակայության, ինչքան առանձին անհատների հոգեբերի և զգացմունքների հետ: Օրինակ՝ Չեմբերսի բառարանում «անվտանգություն» հայեցակարգը վեր է լուծվում որպես անվտանգություն ապահովող վիճակ, ինչպ և միջոց: Հայեցակարգը կապված է «տագնապայության և մտահոգվածության» վիճակների բացակայության և «Վստահության ու կայունության» վիճակների հետ [2]: Ֆրանսիական «Լյարուս» և Անգլիական «Օքսվորդական» բառարաններում նույնական մեկնաբանվում է «անվտանգություն» հայեցակարգը, այսինքն ինչ- որ մեկին կամ ինչ-որ բանի ապակինել կարողանալը, հուսալիություն և վստահություն: Այս ամենը վկայում է այն մասին, որ մշակութային տարբեր նորմեր կրող մարդիկ նույն ձևով են պատկերացնում «անվտանգություն» հասկացությունը: Կատարած փորձերի արդյունքների վերլուծության հիման վրա, հեղինակները (Ս.Կ. Ողջինը և Վ.-Ա. Սոսնինը) ձևակերպել են հոգեբանական անվտանգության սահմանումը, որպես հանրային գիտակցության մի պայման, որի դեպքում ողջ հասարակությունը և յուրաքանչյուր անհատ ներկա կյանքի որակը որպես աղեկված և հուսալի են ընկալում [3], քանի որ հենց այդ հուսալիությունն է ապահովում անձի ժամանակի պահանջներն ու գործողությունները և երաշխավորում ապագայի կայունությունը:

Ն.Կ. Մուգուլովը նշում է. «...անվտանգությունը հիմնականում կարելի է որպակել որպես նշանակած մի համակարգ, որը բնուրագրում է անվտանգության մշտական իրավիճակը, երբ անձը պաշտպանված է սպառնալիքներից ու վտանգներից և որոնց ազդեցությունը կարող է խիստ բացասաբար անդրադարձնալ նրա կառուցվածքային և ֆունկցիոնալ կարույցի, ամբողջականության զգացողության վրա՝ մինչ նրա լրիվ ոչնչացումը» [4]:

Մուգուլովը կարևորում է «անվտանգության» հայեցակարգում սոցիալական և նյութական բաղադրիչները՝ դիտելով դրանք երեք տարբեր կողմերով. անվտանգություն-նապատակ, անվտանգություն-նորմա, անվտանգություն-հրավիճակ:

Եթե անվտանգությունը դիտարկենք որպես սոցիալական նորմ՝ անվտանգություն-նորմա համատեքստում, ապա հստակ կարող ենք ասել, որ այն սոցիալական արժեքը է ներկայացնում, որը վաղուց է ինտեգրված անհատական և ազգային գիտակցության մեջ: Անվտանգության սոցիալական կարգավիճակը հնարավոր է դարձնում անվտանգության քանակական գնահատականի փաստացի մակարդակը՝ արդեն իսկ մշակված որակական չափանիշների հիման վրա, որոնք էլ սահմանում են անվտանգության մշակած պարամետրերի հիմնական ընդունելի սահմանները [5]:

Հիմնվելով տեղեկատվական աղբյուրներից ստացած տվյալների վրա՝ կարող ենք եզրակացնել, որ անվտանգությունը որպես գիտական կատեգորիա մեկնաբանվում է որպես.

- օբյեկտի որոշակի վիճակ, որն անբաժան է նրանից իր ողջ կյանքի ընթացքում,
- գոյություն ունեցող իրավիճակային և մշտական անվտանգության վիճակ,
- օբյեկտի շահերի անվտանգության ապահովման մակարդակ,
- վտանգը կանխելու և հաղթահարելու մեթոդների ու միջոցների բավարար մակարդակի առկայություն,
- օբյեկտի կայունության որակական երաշխիք,

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

- օրյեկտի, հասարակության գարզացման ու աճի նպաստավոր պայմանների ստեղծում:

Ի.Ա.Բաևան համարում է, որ անվտանգություն հասկացությունն իր մեջ ներառում է նաև «...անձի կարողությունների իրականացում, հայացք դեպի կենսական դժվարություններ, փորձություններ, նրա կարևորությունն ու նշանակալիությունը հատկանշությունների ամբողջություն» [6], քանի որ ինքնախրացումը համարվում է որպես մարդու կարողությունների ու անձնային պոտենցիալի իրացման գործընթաց: Արանից հետևում է, որ հոգեբանական անվտանգությունը ապահովում է նաև ինքնախրացման գործընթացում:

Հոգեբանական անվտանգության հետ կապված ցանկացած խնդիր կարող է լուրջ ազդեցություն ունենալ մարդու կենսագործունեության վրա, սահմանափակել նրա լայնածավալ հնարավորությունները, ստեղծել բազմապիսի խնդիրներ ու խոչընդոտել նրա գործողություններին: Վերոնշյալը ունի ոչ միայն արտաքին չափորոշիչներով պայմանավորված վտանգ, այլև ԲՄՀ-ի (բարձրագույն նյարդային համակարգ) և հոգեկանի քայլայնան կոնսորտիումից պայմաններ է ստեղծում: Ներքին տագնապային վիճակը ծնունդ է լարվածություն, չնտածված գործողություններ, քառ, նոյնիսկ խուճապ ու փախուստի ցանկություն, ինչին մենք ականատես ենք եղել ապրիլի 1-ից լույս 2-ի գիշերը /չիմնավորված փախուստը՝ Պարաբաղց-Երևան/ ու 2-6-ն ընկած ժամանակաշրջանում որոշ մարդկանց անկազմակերպ վարքը: Բարեբախտաբար այն մասսայական բնույթ չի կրել:

Ապրիլյան քարոյրա պատերազմի ընթացքում անվտանգությունը դիտվեց ոչ միայն գուտ անձնային խնդիր և բազային պահանջնունք, այլև ազգային անվտանգության ապահովման, ռազմավարական նշանակության օրակարգային հարց: Ազգային ուժեղի մորիլիզացիան, համայն հայության միասնությունն ու զգու համալրումը բերեցին նրան, որ մենք հաղթանակ ունեցանք ոչ միայն ռազմի դաշտում, այլև թիկունքում: Անձի հոգեբանական անվտանգությունը ներառում է ոչ միայն հոգեկանի բրվանդակության կայունությունը, այլև սոցիալական միջավայրի և հասարակության հետ հարաբերություններում անձի կայունությունը: Այս առումով անձի հոգեբանական անվտանգությունը պայմանավորում են մի շարք կարևոր գործոններ, որոնցից են չափանմուշային խումբը, սոցիալական միջավայրը ու նրա ունեցած ազեցությունը, տեղեկատվության ահեղի հոսքը (ՁԼՄ-ները) որև ինքնին սթրեսածին է և օրգանիզմի ներքին պաշարները: Ինչ վերաբերում է վերջին պայմանին, ապա միայն ապրիլյան իրադարձություններից որոշ ժամանակ անց կարող ենք ասել, որ ամիսների ընթացքում կուտակած սթրեսներն արտահայտվեցին հիվանդությունների կրկնակի աճի, վաղաժամ ծննդաբերությունների, կեսարյանների աճի, մանկական ֆոբիաների ու կակազությունների աճի տեսքով:

Մի շարք հեղինակներ հոգեբանական անվտանգության շրջանակներում դիտարկում են սոցիալական անվտանգության, աշխատանքի անվտանգության, տեղեկատվական անվտանգության հոգեբանությունը, ինչպես նաև անվտանգության ինքնապահովման, կորպորատիվ անվտանգության, արտակարգ իրավիճակների և ահարեկչության հոգեբանությունը [7]: Անտառակույս, այս հասկացությունները սերտ փոխկապակցված են հոգեբանական անվտանգություն հասկացության հետ: Հոգեբանական անվտանգությունն ու պաշտպանությունը հրատապ հարցեր են և դրանց ինտեգրացիան կնպաստի ընդհանուր կենսամակարդակի բարձրացման և հոգեբանական արողության ամրապնդմանն ու պահպանման:

Ցայսօր որպես հոգեբանական անվտանգություն ապահովող հիմնական բաղադրիչ առանձնացվել են այն հիմնականները, որոնք ունեցել են մեծ կշիռ և առաջնահերթ

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

դասակարգում /ռանգավորում/ [8]: Ներքին բաղադրիչներից ուսումնասիրվել են հուգական լարվածության, տոնուսի և սպրեսադիմացկունության գործոնները:

«Անձի հոգեբանական անվտանգությունը գնահատող» սանդղակում «ընտանիք» բաղադրիչի առաջնահերթ ընտրությունը միանշանակ արնչվում է հիմնական պահանջմունքների բավարարման, ջերմության, ապահովության զգացողությունների առկայության և ընտանեկան մքնողորոտում ծնավորված փոխարած վստահության հետ [9]:

Կարող ենք համարել, որ անձի հոգեբանական անվտանգության գիշավոր գործոնների հետ համատեղ փոխկապակցվածությունները բնութագրվում և ընդհանրացվում են բարեկեցիկ կյանքի իմաստավորմամբ, որը դիտարկում ենք որպես ապահով կեցություն՝ բարեկեցություն: Կենսագործունեության այսպիսի պայմաններում ծնավորվող ապահովության զգացողությունը նպաստում է կյանքի հանդեպ դրական վերաբերմունքի դրսուրմանը, իրատեսական գնահատմանը [8, էջ 99]:

Ընդհանրացնելով գործոնային վերլուծության արդյունքները՝ կարող ենք եզրահանգել, որ անձի հոգեբանական անվտանգությունն ապահովող բաղադրիչների նշանակալիությունը պայմանավորվում է սոցիալական միջավայրով, անձի ակտիվությամբ և կյանքի հանդեպ ունեցած պահանջներով և որ ամենաէկականն է, այն իմաստավորվում է գործունեության մեջ (ուսումնական, աշխատանքային, մասնագիտական)՝ կախված այն բանից, թե որքանով են դրանք կարևորվում գործունեության տվյալ ծևում, անձնային և միջանձնային հարաբերությունների տվյալ ենթատեքստում [10]:

Հոգեբանական անվտանգության ապահովման ու պահպանման համատեքստում անհրաժեշտ է դիտարկել նաև «կյանքի դրակ» հասկացությունն ու դրա ունեցած ազդեցությունն անձի վրա: Ընդհանրապես, անձի համար կյանքի դրակյալ լինելը կարող է դրսուրվել նրա սոցիալական միջավայրին համապատասխանության չափով, թե որքանով է այն բավարարում կյանքում ապահովություն ունենալը: Այս է պատճառը, որ «կյանքի դրակը» նույնացվում է կյանքից բավարարվածության և պայմանների բարենպաստության զգացողության հետ [11]: Եվ հենց այս պարագան էլ հանդիսանում է հոգեբանական անվտանգության գրավականներից մեկը:

Ո.Ս.Շամինովը նշում է, որ սուբյեկտիվ բարեկեցությունը կազմված է մի քանի բաղադրիչներից. նյութական համալրման եղանակներ, անձնական եւ հասարակական ինքնորոշման, անհատական բարեկեցության, ֆիզիկական եւ հոգեբանական արողջության, պրոֆեսիոնալ ինքնորոշման եւ ամի: Անձի սուբյեկտիվ բարեկեցության բաղադրիչները՝ համաձայն իր հոգեբանական բովանդակության, շատ հեղինակների կողմից համարվում են, կյանքի սուբյեկտիվ դրակյալ բաղադրիչներ [12]:

Կարևոր է նաև նշել Ս.Մադդիին, ով հոգեբանության գիտական ապահուած ներմուծված «դիմադրողականություն» հայեցակարգը, որը բնորոշվում է որպես անձի ինտեգրացիոն նկարագիր՝ կյանքի պատասխանատու դժվարությունները հաջողությամբ հաղթահարելու համար [13]: Դիմադրողականությունն ու ձկունությունը կարելի է դիտարկել նաև որպես սեփական ամի անբարենպաստ հանգամանքների փոխակերպում, որը իմքնակառավարման ու իմքնավերահսկման ավելի արդյունավետ հիմք է ստեղծում:

Լ.Ա.Ակեբասանդրովան անդրադարնում է դիմադրողականության բաղադրիչներին, որոնցում կարևորում է ոչ միայն անձնական ռեսուրսները հաղթահարելու կարողությունը, այլև իմաստի զգացումը, ինչը կանխորոշում է կենսադիմադրողականության և ընդհանրապես, մարդկային կյանքի վեկտորը, ինչպես նաև մարդասիրական էթիկան և որը սահմանում է հմաստի ընտրության չափանիշները, դրան հասնելու ճանապարհը և կենսական խնդիրների լուծումը [14]: Քանի որ անձի հոգեբանական անվտանգության

ՄԵՍՐՈՒ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ուսումնափրումը նախ և առաջ կապված է մարդու պահանջմունքների բավարարման և կյանքի իմաստավորման հետ, ուստի այն պետք է դիտարկել որպես մարդու կյանքի ռազմավարության առաջնային դրդապատճառ:

Էկզիստենցիալ հոգեբանության ներկայացուցիչները բազմից շեշտում ու զնդգում են իմաստի կարևորությունն ու առկայության անհրաժեշտությունը կյանքի յուրաքանչյուր ասպեկտներում: Եվ ընդհանրապես, հոգեբանական անվտանգության ապահովման ու մանավանդ, պահպանման համար, շատ կարևոր ու անբաժան բաղադրիչ է հանդիսանում իմաստը, իմաստալից կյանքն ու գործողությունները, որոնք էլ իրենց հերթին մոտիվացվածության բարձր ցուցանիշներ են ապահովում անձի համար կարևոր ասպեկտներում: Մոտիվացվածության բարձր աստիճանը, կենսական սունուսը, բարձր արժեքները և կյանքը գնահատելու մշտական թարմության զգացողությունը, ապրելու, պայքարելու ձգտումը ստիպում են անձին մորիլիզացնել սեփական ուժերն ու ռեսուրսները, հանուն որևէ նպատակի:

Հասուն ուշադրություն պետք է դարձնել հոգեբանական անվտանգության ու պատրաստվածությանը, հատկապես արտակարգ իրավիճակների պայմաններում: Ժամանակակից մարդու քիչ թե շատ պատրաստ է այնպիսի իրավիճակների, սակայն հոգեբանական ֆոնը էապես կարևոր է անձի անվտանգության խնդրի լուծման գործում: Արօրյա կյանքի սոցիալական շեշտադրումներն ակնառու են, ուստի հոգեբանական անվտանգության հիմնախնդրի սոցիալ-հոգեբանական կոնսեքսուի ուսումնասիրումը պետք է մշտական ուսումնասիրման և վերլուծության նյութ հանդիսանա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Александрова Л.А. О составляющих жизнестойкости личности как основе ее психологической безопасности в современном мире // Известия Таганрогского государственного радиотехнического университета. 2005. Т. 51. № 7. стр. 1.
2. Роцин С.К., Соснин В.А. Психологическая безопасность: новый подход к безопасности человека, общества и государства//Российский монитор. 1995. № 6; Общая теория безопасности (актуальные методологические и социально-политические проблемы). М., 1994.
3. Նույն տեղում:
4. Мугулов Ф.К. Безопасность личности: теоретические и прикладные аспекты социологического анализа: монография. Сочи: РИО СИМБиП, 2003, стр. 45
5. Ежевская Т.И.Безопасность личности: система понятий, основные виды и психологические характеристики // Ежевская Татьяна Иннокентьевна Безопасность личности: система понятий // Психопедагогика в правоохранительных органах. 2008. №4. URL: <http://cyberleninka.ru/article/n/bezopasnost-lichnosti-sistema-ponyatiy> (дата обращения: 17.02.2017)
6. Баева И. А.,Психологическая безопасность в образовании:монография. – СПб., 2002, стр.50
7. Краснянская Т. М., Тылец В. Г., Понятийные ориентиры развития психологической безопасности личности в предметном поле современных исследований/GESS: Education Science and Psychology,N1 (23), 2013, стр. 59-64.
8. Անձի կենսագործունեության հոգեբանական անվտանգություն// Կոլեկտիվ մենագրություն, հեղ.՝Ռ. Վ. Աղուգումյան, Վ. Ռ. Պապյան, Ա. Ս. Գալստյան, Ե. Բ. Սուրառյան, Դ. Յ. Սարգսյան, Ծ. Ս. Ամիրյան // Եր., 2015, էջ 12:

ՄԵՍՐՈՒԹՅԱՆ ԱՎԵՏՈՅՑ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՏՈՒ 2017

9. Նույն տեղում, էջ 144:
10. Նույն տեղում, էջ 101:
11. Նույն տեղում, էջ 104:
12. Практикум по психологии здоровья / Под ред. Г.С. Никифорова. СПб., 2005.
13. Шамионов Р.М. Психология субъективного благополучия личности. Саратов, 2004.
14. Герасимова В. Д. Угрозы информационно-психологической безопасности личности и их основные источники, Шуйский филиал Ивановского Государственного университета// <https://www.scienceforum.ru/2014/pdf/5619.pdf>

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Հոգեբանական անվտանգության իիմնախնդրի
սոցիալ-հոգեբանական կոնսեքստը
Ուզայա Հարությունյան**

Անվտանգություն հասկացությունը վերջին տարիներին ծեռք է բերել ոչ միայն հանրային, այլև համաշխարհային նշանակություն։ Անվտանգությունը բարոյ, բազմաբովանդակ, բազմակառուց կենսապահովական համակարգ է, որն ամեն առումով փոխկապակցված է կյանքի կարևոր ասպեկտների հետ։ Հոգեբանական անվտանգությունը մեծապես իիմնախնդր է անձի սուբյեկտիվ աշխարհընկալման, հուզական դաշտի կայունության, անձնային փորձի, հոգեկանի գործունեության առանձնահատկությունների, բնավորության, խառնվածքի և այլ որակների վրա։ Անվտանգության զգացողության ընկալման գործընթացը ավելի շատ կապված է սուբյեկտիվ պատկերացումների հետ, քան օբյեկտիվ։ Այս և հոգեբանական անվտանգության առնչվող մի շարք հարցեր ենք փորձել վեր հանել սույն հոդվածի շրջանակներում։

РЕЗЮМЕ

Социо-психологический аспект психологической безопасности

Розалия Арутюнян

Ключевые слова: безопасность, духовное здоровье, ценности, смысл жизни, мобилизация.

Психологическая безопасность за последние годы приобрела не только общественное, но и мировое значение. Безопасность представляет собой сложную, содержательную, многоуровневую систему, которая во всех смыслах связана с важными аспектами жизни. Психологическая безопасность в большей степени опирается на субъективное мировосприятие личности, стабильность эмоционального поля, личный опыт, особенности внутреннего мира, характера и темперамента.Процесс познания ощущения безопасности больше связан с субъективными понятиями, чем с объективными. Эти и некоторые вопросы, касающиеся психологической безопасности, мы попробовали осветить в данной статье.

SUMMARY

Socio-psychological aspect of psychological safety
Rozalya Harutyunyan

Keywords: *security, spiritual health, values, meaning of life, mobilization*

Psychological safety has recently gained not only public, but global importance. Security is a complex, substantial, multilevel system that is completely associated with important aspects of life. Psychological security to a large extent relies on personality's subjective world perception, emotional field stability and personal experience, as well as peculiarities of the inner world, character and temperament. The process of cognition of the sense of security is more associated with subjective concepts than with the objective ones. These are some issues related to psychological safety, that we tried to highlight in this article.